Արձանագրություն N 3

N «ԱՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2»
Ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 09 հոկտեմբերի 2018թ.

ժ.10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վարդան Գրիգորյան /ֆինանսատնտեսական գծով տնօրենի տեղակալ/

անդամներ՝ Լիանա Խաչատրյան /բուժական գծով տնօրենի տեղակալ/

Աննա Հովհաննիսյան /Կադրերի տեսուչ/

Հանձնաժողովի քարտուղար՝ Հայկանուշ Թովմասյան

Օրակարգ

Որակավորման չափանիշների գնահատման նիստի մասին

1. Որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացրած մասնակիցների անվանումները և էլեկտրոնային փոստի հասցեները:

<<ԱՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2>> ծածկագրով գնման ընթացակարգին որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացրել են՝

2.1 <<Զորաշեն>> ՍՊԸ, էլ.փոստ՝ Zorashen@mail.ru

2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1 <<Զորաշեն>> ՍՊԸ-ի կողմից որակավորման փաստաթղթերը ներկայացվել էին թերի, մասնակցի կողմից չէր ներկայացվել հրավերով պահանջվող հավելված 2-ը, ներկայացվել էր միայն հավելված 3-ը: Արձանագրված թերությունները մասնակցի կողմից շտկվել են, և հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարարու հրավերի պահանջներին համապատասխան:

2.2 <<Զորաշեն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3.Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով

<<Զորաշեն>> ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած (եզրակացություն) հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող՝ հիմք ընդունելով **<<ԱՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2>>** ծածկագրով հրավերի I մասի 7.13 կետի 4 ենթակետում նշված փաստաթղթերի առկայությունը:

4. Ըստ որի գնահատող հանձնաժողովը որոշեց՝

4.1 **<<ԱՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2>>** ծածկագրով ընթացակարգի 1 չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում <<Զորաշեն>> ՍՊԸ-ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, որի հետ առաջարկվում է կնքել պայմանագիր:

4.2 *Հասարել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:*

4.3 *"Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:*

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

5 <u>Շահերի բախման բացակայության մասին</u>

<<ԱՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված ծածկագրով գնման ընթացակարգի որակավորման փաստաթղթերի գնահատման նիստից հետո հայտարարում է, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունի շահերի բախում:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան /ֆինանսատնտեսական գծով տնօրենի տեղակալ/

Անդամներ՝ _____ Լ. Խաչատրյան /Բուժական գծով տնորենի տեղակալ/

_____ Ա. Հովհաննեսյան /Կադրերի տեսուչ/

Քարտուղար՝ _____ Հ. Թովմասյան